ԱՐԵՎՄՈՒՏՔԸ՝ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2023.3-107

Եվրոպայի մեղքերի ամոթից այլևս կարելի չէ նայել երկնքին:
Յոզեֆ Մարքվարտ
գերմանացի արևելագետ, հայագետ

Ես ամերիկա-անգլոֆիլությունը համարժեք եմ համարում թուրքոֆիլությանը և հայրենիքի դավաճանությանը:

Գարեգին Նժդեհ

Հիմնաբառեր. *Արևելք-Արևմուտք հակամարտություն, քրիստոնեություն, իսլամ, հայկական պետականության կորուստ, անկախության պայքար, դավադրություն, խաչակիրներ, հավասարակշռության տեսություն, Բեռլինի վեհաժողով, ցեղասպանություն, Սևրի պայմանագիր, Լոզանի հաշտության պայմանագիր, արցախյան գոյամարտ*

Հայ ժողովուրդը Հայկական բարձրավանդակի ծնունդն է և Արևելքի զավակը: Ավանդապաշտ է, բնապաշտ, զգացմունքային: Նրա մշակույթը սրտի մշակույթ է, ուրիշի «աշխարհ» մտնելն է և ուրիշի հոգս ու ցավով ապրելը... Արևելքի մարդը չի հավակնում աշխարհի և ուրիշի ճանաչողությանը: Դրանով է պայմանավորված, որ հանճարեղ Թումանյանը, որի հարազատ տարերքն Արևելքն էր, նշում էր, որ մենք ո՛չ մեզ ենք ճանաչում և ո՛չ էլ մեր հարևաններին...

Արևմուտքն աշխարհն իմաստավորում է բացառապես բանականությամբ: Այստեղ առաջնայինը մարդը չէ, այլ տեխնիկան: Այստեղ ամեն ինչ հաշվենկատ է, շահի վրա հիմնվող: Այստեղ չկա ուրիշի հոգսով ապրելը: Արևմտյան քաղաքակրթությունը ներառում է այլ «հոգևոր ուղի», որը հենվում է բանականության վրա, դավանում բարոյաէթիկական և մշակութային արժեքների այլ համախումբ, որը բխում է բանական էգոիզմից...

Սրանցից յուրաքանչյուրն արժեքավոր է յուրովի, ինչի մասին է վկայում դեռևս Հերոդոտոսի և Արիստոտելի ստեղծած «բարբարոս Արևելքի և քաղաքակիրթ Արևմուտքի» հայեցակարգը, որը հետագայում խորապես մշակվեց Շ. Մոնտեսքյուի «Օրենքների ոգու մասին» և Ա. դե Թոքվիլի աշխատություններում ու դարձավ տիրապետող հասարակական գիտակցության մեջ:

Յուրի ՀՈՎԱԿԱՆՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

1976 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը՝ «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ: 1987 թ. ստացել է փիլիսոփայական գիտությունների թեկնածուի աստիճան, 1990 թ.՝ դոցենտի կոչում: 2019 թ. օգոստոսին նշանակվել է ՀՊՏՀ փիլիսոփայության և հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար: Հեղինակ է 6 մենագրության և ավելի քան 40 գիտական հոդվածների:

https://orcid.org/0000-0002-6503-4872

Ալեքսանդրի արշավանքներից և հատկապես քրիստոնեության պետականացումից հետո մեր հայացքն ուղղվեց դեպի Արևմուտք, դեպի Եվրոպա… Մենք, որ Արևելքի հետ միասին պատերազմում էինք Արևմուտքի դեմ, դարձանք արևմտյան արժեքների կրողն ու տարածողն Արևելքում: Եվ Արևելքում մեզ սկսեցին նայել որպես օտար մեկի: Մինչդեռ Արևմուտքը մեզ երբեք չդիտարկեց որպես դաշնակից և չկանգնեց մեր թիկունքին, թեև մենք մեզ վրա էինք վերցրել արևմտյան մշակութային ու քաղաքական արժեքները տարածողի ծանր ու պատասխանատու դերն Արևելքում…

Հեղինակը բազմաթիվ օրինակների միջոցով փորձում է հիմնավորել, որ հայոց պետականության կորստի, մեծ և փոքր բոլոր ողբերգությունների հիմքում մեր սխալ ու չհիմնավորված կողմնորոշումն էր դեպի Արևմուտք, այն դեպքում, երբ վերջինս ունի իր աշխարհաքաղաքական շահերը, որոնք երբեք էլ չեն ներառել Հայաստանի ինքնանկախ, առավել ևս՝ հզոր պետության գոյությունը: Ցավոք, նույն համառությամբ, այսօր էլ կրկնում ենք այդ սխալը և մեր բնական դաշնակիցների փոխարեն՝ դիմում Արևմուտքի աջակցությանը…

Ուր ազգային ողբերգությունը սկիզբ առավ այն պահին, երբ առճակատվեցին Արևելքն ու Արևմուտքը՝ որպես հակադիր աշխարհաքաղաքական ուժեր, երկու ներհակ, թշնամի սկզբունքներ և հոգևոր–բարոյական արժեհամակարգեր: Այդ առճակատման մեկնարկը, թերևս, պետք է վերագրել պարսից Դարեհ Ա արքայի (մ. թ. ա. 522-486 թվականներ) ժամանակներին, երբ մ. թ. ա. 490 թ. վերջինս իր բազմահազարանոց բանակն առաջնորդեց դեպի Հունաստան: Մարաթոնի ճակատամարտում կրած պարտությունից հետո Դարեհը նոր արշավանքի էր նախապատրաստվում, սակայն վաղաժամ մահվան պատճառով նա չհասցրեց կյանքի կոչել իր այդ ծրագիրը:

Արևելքի և Արևմուտքի մեծ պայքարը շարունակվում է առայսօր: Եվ այս իմաստով, Դարեհի արշավանքը, ինչպես նկատում է պատմաբան Լեոն, միայն առաջաբանն էր: Դարեհի որդի Քսերքսեսը (մ. թ. ա. 486-465 թթ.) ավելի մեծ արշավանք նախաձեռնեց՝ Արևմտյան աշխարհը կործանելու վճռականությամբ, որին մասնակցեցին նաև հայերը՝ որպես արևելյան արժեհամակարգի կրողներ և Աքեմենյան արքաների դաշնակիցներ:

Վերոնշյալ իրադարձություններից որոշ ժամանակ անց հզորացած Հունաստանը, որն իր վրա էր վերցրել Արևմուտքի դիրքապահի և առաջամարտիկի դերը, ուժեղ և կազմակերպված բազմահազարանոց բանակով, Արիստոտելի 22–ամյա աշակերտի՝ Ալեքսանդր Մակեդոնացու առաջնորդությամբ, շարժվեց դեպի Արևելք՝ հելլենականություն, այսինքն՝ արևմտյան արժեքհամակարգ, մշակութային և բարոյական սկզբունքներ տարածելու նկատառումով: Թվում էր՝ նա «պիտի ազատեր Արևելքը թագավորների, սատրապների դարավոր բռնակալությունից, փշրեր ազգերի ստրկության շղթաները և ազատ ժողովուրդների վարչական սկզբունքները հաստատեր ամեն տեղ՝ արվեստի, գիտության մաքուր լույսի հետ միասին: Այսպես մտածում էին շատ հույներ, բայց ոչ Ալեքսանդրը: Նրա ուսուցիչը՝ Արիստոտելն ուսուցանել էր իր հռչակավոր աշակերտին, թե ասիացիները ստրուկներ են և նրանց կարելի է կառավարել միայն բռնակալական եղանակով…»[1]:

Անցել է գրեթե երկու հազար չորս հարյուր տարի, սակայն պետք է խոստովանել, որ Արևելքի հանդեպ Արևմուտքի վերաբերմունքը չի փոխվել, այլ սկզբունքորեն մնացել է նույնը. փոխվել են միայն հակամարտության հիմնավորումներն ու պայքարի մեթոդները:

Աշխարհաքաղաքական և մշակութային այդ հակամարտությունն ու բախումները չէին կարող անհետևանք մնալ: Արշավանքների և փոխադարձ շփումների արդյունքում ձևավորվեց հելլենիզմը կամ հունականությունը՝ որպես քաղաքական և մշակութային կողմնորոշում, արևելյան

[1] Լեո, Երկերի ժողովածու, առաջին հատոր, Եր., 1966, էջ 288:

երկրներում, ներառյալ՝ Հայաստանը, լայնորեն տարածվեցին հունարենը և հունական մշակույթը, հելլենիստական միապետությունների ձևավորմամբ ստեղծվեցին մարդու և հասարակության իրավական նոր հարաբերություններ, սոցիալ-հոգեբանական մի նոր՝ աշխարհաքաղաքացու կերպար՝ մեծ աշխարհին պատկանելու զգացողությամբ և գաղափարախոսությամբ, ուժեղացավ խորհրդապաշտական մտածելակերպը՝ իշխող դարձնելով պրակտիցիզմի և ուտիլիտարիզմի ոգին, ճանապարհ հարթելով քրիստոնեական վարդապետության համար, որի հաղթարշավին և հզորացմանը զուգընթաց, թուլացավ և նահանջ արձանագրեց ազգային արժեհամակարգը՝ դիցարանը, ավանդույթները, խորհրդանիշները, ոգին, պառակտվեց ազգային միասնությունը՝ խարխլելով ազգային պետության հիմքերը… Ի վերջո, արձանագրվեց անկախ պետականության կորուստ: 387 թ. Սասանյան Պարսկաստանի և Հռոմեական կայսրության միջքաղաքական պայմանավորվածությամբ Հայաստանն առաջին անգամ բաժանվեց, ու այս գործում վճռորոշ դեր խաղացին հայ նախարարները, որոնց մի մասն ուներ արևելյան կողմնորոշում և պաշտպանում էր պարսիկներին, իսկ մյուս մասը՝ արևմտյան, և պաշտպանում էր հռոմեացիներին: Այդ բաժանումը դարձավ ճակատագրական և ժամանակի ընթացքում էլ ավելի խորացավ՝ հանգեցնելով սոցիալական, քաղաքական, տնտեսական, մշակութային, բարոյական, ինչպես նաև աշխարհայացքային և հոգեբանական հակամարտության, հետևաբար նաև աղետի…

Արժեքների պայքարը տարբեր հոգեբանական տիպերի որդեգրած ճշմարտությունների միջև պայքար է, և ոչ մի դեպքում մարտնչողն այնքան ժխտողական վերաբերմունք չունի դեպի թշնամին, որքան նման պայքարում: Մենք ծանոթ չենք եղել կամ, ավելի ճիշտ, չենք հաղորդակցվել հնդկական և չինական բարձր մշակույթին, արևելյան մշակույթ ասելով հասկացել ենք իրանականը կամ մոնղոլ-թաթարական կիսաքաղաքակրթությունը կամ, ինչպես Առնոլդ Թոյնբին էր բնութագրում, «քարացած քաղաքակրթությունը» և իսլամական կրոներանգ մշակույթը: Մինչդեռ, ինչպես նկատում է Հ. Ասատրյանը, պատմությունը վկայում է, որ գրական կյանք ունենալուց հետո հայերն այս բոլորի հանդեպ «գարշանքից բացի այլ զգացում չեն ունեցել», որի պատճառն այն է, որ «հայերը ցեղաբանօրէն մոնգոլներին բոլորովին խորթ են, արաբների հետ ոչ մեկ կապ չունեն, իսկ պարսիկներին կապւում են միայն հեռաւոր, գրեթէ, աղօտւած մի գծով»[2]:

Արևմտյան էությունը հայը պատկերում է իբրև պայծառ և հարազատ մի գիծ, արևելյանը՝ մութ և խորթ, առաջինը նա համարում է մաքրություն, երկրորդը՝ ապականություն, որտեղից էլ, Ասատրյանի բնորոշմամբ. «Արժէքաւորման այս խոտորնակ չափանիշը հոգեբանօրէն անկարելի պիտի դարձնէր արեւմտեան եւ արեւելեան էութեանց համադրման որեւէ ճիգ»[3]:

Տարբերվելու՝ իր այդ հակման շնորհիվ, ինչպես հայտնի է, հայոց ազգայնացված քրիստոնեությունը ստացավ ցեղի կրոնական անձնավորման բնույթ և, իբրև այդպիսին, ո՛չ արևմտյան եկեղեցիների դավանությանը որևէ զիջում արեց, ո՛չ Արևելքի հակաքրիստոնեական հորձանքներին տեղի տվեց, ո՛չ էլ զրադաշտականությունը կամ իսլամը քրիստոնեության հետ հաշտեցնելու փորձի դիմեց: Այսինքն՝ այն մնաց միանգամայն ինքնատիպ, որի հետևանքով էլ թշնամացավ շրջակա բոլոր ժողովուրդներին՝ փոխարենը ձեռք չբերելով և ոչ մի դաշնակից:

Քրիստոնեությունը որպես ազգային կրոն դավանող հայությունն ավելի սերտորեն կապվեց քրիստոնյա Արևմուտքի հետ, և իսլամի տարածումից հետո մահմեդական Արևելքը չէր կարող անտարբեր մնալ նման երևույթի հանդեպ ու հայությանը սկսեց վերաբերվել որպես թշնամական ուժի: Սակայն, Քաղկեդոնի տիեզերաժողովից հետո տեղի ունեցած դավանաբանական բաժանման հետևանքով Արևմուտքը նույնպես հայությանը սկսեց ընկալել որպես հակադիր ուժ: Այսպիսով՝ հայությունը դարձավ օտար և անընդունելի և՛ Արևելքի, և՛ Արևմուտքի համար՝ միաժամա-

[2] Հ. Ասատրյան, Հատընտիր, Եր., 2004, էջ 74:
[3] Նույն տեղում, էջ 75:

նակ: Հակաքաղկեդոնական դավանաբանության անհրաժեշտությունը մեզանում ներկայացվում է որպես ազգային ինքնությունը պահպանելու գաղափարաբանություն և գործելակերպ: Մինչդեռ նման տարանջատմամբ մենք վաստակեցինք արևմտյան՝ հռոմեական և բյուզանդական եկեղեցիների ոչ բարեհաճ վերաբերմունքը, ինչի ապացույցն է այն, որ պատմության որոշ փուլերում մահմեդականությունն էլ ավելի հանդուրժող գտնվեց մեր հանդեպ, քան Արևմուտքը, որը ձգտեց կործանել մեզ՝ ոչ միայն որպես ազգ, պետականություն, այլև իբրև մշակույթ:

Քրիստոնեություն ընդունելով՝ մենք կտրվեցինք և հեռացանք Արևելքի մեր ցեղակիցներից, մասնավորապես՝ պարսիկներից, իսկ, դավանաբանական տարբերություններով, հոգեկերտվածքով և ավանդույթներով պայմանավորված՝ մնացինք օտար և անընդունելի Արևմուտքի համար: Նույնիսկ Բյուզանդական կայսրության հայազգի կայսրերը, որոնք հետևում էին քաղկեդոնական դավանաբանությանը, թշնամաբար էին տրամադրվում հայոց պետականության և հայ ժողովրդի հանդեպ: Այդ մասին է վկայում հայկական ծագմամբ Մորիկ Հայկազն (Մավրիկիոս) կայսեր (թագավ. 582-602 թթ.) կործանարար քա-ղաքականությունը: Թերևս, հետևելով իր նախորդներին, նա նույնպես հայ զինական ուժը պարբերաբար դուրս էր բերում երկրից: Այդ դիվային ծրագրի մասին է վկայում նաև պարսից Խոսրով Բ Ափարվեզ արքային (թագավ. 591-628 թթ.) ուղղված նրա նամակը, որի մասին հիշատակում է Սեբեոս պատմագիրը. «Մի խոտոր և անհնազանդ ազգ կա մեր մեջ և պղտորում է: Ես իմ հատվածի ժողովրդին ժողովեմ և Թրակիայում գումարեմ, իսկ դու քոնը ժողովիր և հրամայիր արևելք տանել: Եթե նրանք մեռնեն, ապա կմեռնեն մեր թշնամիները և եթե սպանեն, մեր թշնամիներին կսպանեն, և մենք խաղաղությամբ կապրենք: Որովհետև, եթե նրանք իրենց երկրում մնան, մենք հանգիստ չենք լինի»[4]:

Հայ զինվորական ուժը երկրից դուրս բերելուն զուգընթաց, Մորիկը ցանկանում էր քաղկեդոնականություն տարածել Հայաստանում: Այդ նպատակով նա հրամայում է եկեղեցական ժողով գումարել Կ. Պոլսում՝ հայոց բոլոր եպիսկոպոսների և կաթողիկոս Մովսես Բ Եղվարդեցու (574-604 թթ.) մասնակցությամբ՝ երաշխավորելով, որ կայսրությունը կճանաչի վերջինիս՝ որպես հայոց երկրի կաթողիկոս: Կաթողիկոսը կտրականապես մերժում է կայսեր առաջարկը, ինչից հետո կայսրը Հայաստանի բյուզանդական մասում ստեղծում է հակաթոռ կաթողիկոսություն՝ կաթողիկոս կարգելով Հովհաննես Բագարանցի եպիսկոպոսին (591-601 թթ.):

Բյուզանդական կայսրերը, ինչպես նաև հռոմեական եկեղեցին և խաչակիրները Հայաստանի և հայ ժողովրդի նկատմամբ նման գործելակերպ վարեցին նաև հետագայում, ինչի հետևանքով ոչ միայն դատարկվեց Հայաստան աշխարհը, այլև մեկը մյուսի հետևից կործանվեցին Բագրատունիների, Արծրունիների, Զաքարյանների և Կիլիկիայի իշխանապետությունները: Աներկբայորեն կարող ենք ասել, որ այդ քաղաքականության հետևանքով կործանվեց նաև Բյուզանդական կայսրությունը:

Բյուզանդական իշխանությունները երբեք չհրաժարվեցին Հայաստանն իրենց սեփական տարածք համարելու մտքից և, օգտվելով պարսիկների, իսկ հետագայում նաև արաբների, թուրք-սելջուկների արշավանքներից, կիրառելով հայ ազնվականներին սիրաշահելու և կաշառելու, ահաբեկելու, ինչպես նաև բացահայտ կերպով զավթելու մեթոդները, նրանք գրավեցին Հայաստանի տարածքների մեծ մասը, հայաթափեցին դրանք՝ ամրացնելու և հզորացնելու փոխարեն: Կայսրության առաջին զոհը Բագրատունիների Տարոնի իշխանապետությունն էր, որը, բուն Տարոնից բացի, ընդգրկում էր «Աշխարհացոյց»[5]-յան Տուրուբերանի Խութ, Ասպակու-

[4] Բյուզանդական քաղաքականությունը Հայաստանում Մորիկ կայսեր օրոք, https://web.archive.org/web/20120221074207/http://historyarmenia.org/8448.html

[5] «Աշխարհացոյցը» հայ միջնադարյան աշխարհագրական երկասիրություն է, որը կազմել է Մովսես Խորենացին և շարունակել, թարմացրել Անանիա Շիրակացին: Այն կից ունեցել է նաև 15 քարտեզ: Ըստ «Աշխարհացույցի»՝ Մեծ Հայքն ունի 15 նահանգ ու 178 գավառ: «Աշխարհացույցն» իր կառուցվածքով նման է հույն աշխարհագիր Կլավդիոս Պտղոմեոսի (90–168 թթ.) «Աշխարհագրությանը»: Տես Աշխարհացույց, https://hy.wikipedia.org/wiki/Աշխարհացույց

նիք, Վարաժնունիք, Խորխոռունիք, Աղձնիքի Սասուն և այլ գավառներ[6]: Նվաճումից հետո Տարոնը վերածվեց բյուզանդական բանակաթեմի:

Մասնագիտական գրականության մեջ իշխում է այն տեսակետը, որ «հայկական հարստությունը» ներկայացնող Բարսեղ II Բուլղարասպանը (976-1025 թթ.) 1021 թ. նվաճեց Վասպուրականը: Անկասկած, դրանում կա որոշակի ճշմարտություն, քանի որ եղել է բյուզանդական կայսրության ճնշումը, սակայն Վասպուրականի թագավորությունը, որը գոյատևեց մոտ 110 տարի (908-1021 թթ.), կամովին ընդունեց այդ որոշումը՝ առանց դիմադրության, առանց պայքարի, առաջին վաչկատունների՝ օղուզների հետախուզական ջոկատներից 1016 թ. կրած պարտությունից հետո, երբ Սենեքերիմ Արծրունուն օգնության եկած բուլղար ռազմագերիների անկանոն ջոկատներն ավերեցին երկիրն ու ավելի սրեցին իրավիճակը: Վասպուրականի թագավորը, թերևս, հարկադրված կերպով ընդունեց Բարսեղ II-ի պարտադրած պայմանագիրը և իր լայնածավալ թագավորությունը՝ 8 քաղաք, 72 բերդ, 4 հազար գյուղ, հանձնեց կայսրությանը, փոխարենը՝ որպես «հատուցում» ստացավ Փոքր Հայքի Սեբաստիա քաղաքն իր շրջապատով և իր արքունիքով, մերձավորներով, 14 հազարանոց զորքով տեղափոխվեց այնտեղ:

Ընդամենը մեկ տարի հետո՝ 1022 թ., Պետրոս Գետադարձ կաթողիկոսը Հովհաննես Սմբատ Բագրատունու հանձնարարությամբ բյուզանդական Բարսեղ Բ Բուլղարասպան կայսեր հետ պայմանավորվեց հանձնել Անիի թագավորությունը: Ահաբեկված Հովհաննես Սմբատը՝ փառապանծ և ազնվազարմ տոհմի ժառանգը, որոշեց պայմանագիր կնքել կայսեր հետ՝ անգամ ամենավատ պայմաններով, միայն թե իրենից հեռացնի պատերազմը: Արիստակես Լաստիվերցին գրում է, որ այնտեղ՝ Տրապիզոնում «գրվեց հայերի կորստյան կտակնամակը, որովհետև Հովհաննես Սմբատը պատվեր էր տվել հայրապետին, թե գրություն գրիր և կտակ տուր թագավորին, որ իմ մահից հետո իմ քաղաքներն ու երկիրը նրան եմ հանձնում որպես ժառանգություն»[7]:

Իրապես, պատմագրությունը հարուստ է բյուզանդական կայսրերի հակահայ քաղաքականության և Հայաստանը, որպես պետություն, վերացնելու դրվագներով: Այդ ամենը կա և անժխտելի է: Բայց կա նաև մի նրբություն, որին, պարզապես, չենք կարող չանդրադառնալ: Լաստիվերցու վկայությամբ, Բյուզանդիայի Կոնստանդին VIII (976-1028 թթ.) կայսրը, որը Բարսեղ Բ-ի հարազատ եղբայրն էր և 976 թվականից՝ եղբոր գահակիցը, վերջինիս մահից հետո դարձավ միահեծան կայսր, և, ի տարբերություն իր նախորդների, նաև եղբոր, ձգտում էր պահպանել հայոց թագավորությունը: Թերևս, նա այն բացառիկ հայազգի կայսրն է, որի մեջ վերջապես «խոսել» է արյունը: Լաստիվերցին գրում է. «Երբ մեծ Կոնս-տանդինը պառկած էր այն հիվանդությամբ, որից և մեռավ, հրաման տվեց մոտը եղածներին. «Դուրս եկեք, փնտրեցեք մի մարդ հայոց աշխարհից և ում որ գտնեք, բերեք այստեղ»: Խնդրակները գտան Կիրակոս անունով մի երեցի, որը կաթողիկոսարանի հյուրընկալն էր և բերեցին թագավորի մոտ: Թագավորը հայոց աշխարհի վերաբերյալ նամակը տվեց նրան ու ասաց. «Այս գրությունը տար և տուր հայոց թագավորին ու ասա, թե որովհետև բոլոր հողածինների նման մահվան հրավերը մեզ հասավ, առ քո գրությունը և քո թագավորությունը տուր որդուդ, իսկ քո որդին՝ իր որդիներին, մինչև հավիտյան»: Եվ ինքը մահճում պառկած վախճանվեց: Իսկ Կիրակոսը նամակը պահեց իր մոտ՝ մինչև Միխայիլի թագավորելը և նրան վաճառելով ստացավ շատ գանձեր: Ավաղ, այն ցավալի առևտրին որքան մարդկանց արյունապարտ դարձավ, ինչքան եկեղեցիներ ավերվեցին այդ վաճառքի պատճառով, քանի՞ գավառներ դարձան անմարդաբնակ ու ամայի, քանի՞ մեծանիստ ավաններ զրկվեցին բնակչությունից»[8]:

[6] Ստեփանոս Տարօնեցի, Տիեզերական պատմութիւն (բնագիրը՝ Գուրգէն Մանուկեանի),- «Մատենագիրք Հայոց», ԺԵ հատոր, Ժ դար, Գիրք Բ,Անթիլիաս, 2011:

[7] Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, թարգմանությունը Վ. Ա. Գևորգյանի, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գ. Մանուկյանի, Եր., 1971, էջ 32:

[8] Նույն տեղում, էջ 57:

Մաթևոս Ուռհայեցի ժամանակագիրը գրում է, որ Հայաստանը գրավելուց հետո հոռոմները դադարեցրին պայքարը հայոց դեմ, «բայց այս անգամ էլ ձեռնարկեցին նրանց դեմ այլ պատերազմ. նրանք սկսեցին հայերին հավատաքննության ենթարկել: Նրանք ատեցին պատերազմական գործը, բայց Աստծո եկեղեցու մեջ կռիվ ու տակնուվրայություն հաստատեցին: Նրանք խուսափում են սելջուկների դեմ կռվելուց, բայց աշխատում են բոլոր իսկական քրիստոնյաներին դավանափոխ անել. հանդիպած քաջ ու հզոր մարդու աչքի լույսն են խավարեցնում կամ ծովը գցում և ջրահեղձ անում: Նրանց նպատակն էր հայոց բոլոր իշխաններին ու քաջ զինվորականներին Արևելքից հանել բերել հույների մեջ բնակեցնել»[9]:

Եվրոպայի հայահալած քաղաքականության և Հայաստան պետության հանդեպ թշնամանքի դրսևորման օրինակները բազմաթիվ են և մեկը մյուսից ավելի տմարդի: Բնականաբար, այդ բոլոր օրինակների մասին խոսելը մեկ հոդվածում կամ մեկ աշխատությունում անհնար է: Հ. Ասատրյանն իր «Հայաստան – արիական նախադիրք Առաջավոր Ասիայում» արժեքավոր աշխատության մեջ, որը հրատարակվել է 1942 թ. Սոֆիայում, գրում է, թե հայ ժողովուրդը, որի «դիւցազնական զօրավարների, կայսրերի եւ հնահռչակ այրուձիի քաջութեան եւ նուիրումի շնորհիւ շատ անգամներ փրկուեցին Եւրոպան եւ քրիստոնեութիւնը, … իրերի ապերախտ մի դարձակէտում զոհ դարձաւ եւրոպական ոյժերի քաղաքական հակամարտութեան, նրանց բարոյական կարճատեսութեան, նրանց դաւաճանութեան»[10]:

Նման քաղաքականության ամենավառ դրսևորումներից է արևմտյան պետությունների և եկեղեցիների վերաբերմունքը Կիլիկիայի հայկական թագավորության հանդեպ: Անկասկած, Կիլիկիայի հայկական պետության ստեղծման սկզբնական շրջանում խաչակիրները մեծ ծառայություն մատուցեցին Ռուբինյան իշխանությանը՝ վերացնելով Դաշտային Կիլիկիայի քաղաքներում տեղակայված թուրքական կայազորները և հիմնադրելով Եդեսիայի կոմսությունն ու Անտիոքի իշխանապետությունը, Կիլիկիայի արևելյան և հարավային սահմաններից հեռացնելով մահմեդական երկրներից սպառնացող անմիջական վտանգը: Միջին դարերում, ինչպես նկատում է Հ. Ասատրյանը, Եվրոպայում կային քաղաքական գործիչներ (Ֆրիդրիխ Բարբարոսա (Շիկամորուս), Հայնրիխ VI, Լեոպոլդ I կայսրեր և ուրիշներ), որոնք գիտակցում էին, որ ասիական բարբարոսներով շրջապատված Հայաստանը՝ արիական այդ կղզին, «քրիստոնեութեան, եւրոպականութեան վտանգի գիծն է, խարիսխը, նախադիրքը» և ցանկանում էին ազատագրել մահմեդականների ու թուրքերի լծից՝ այն համոզվածությամբ, որ «զորավոր Հայաստան ասել է՝ բարոյապէս հզօր եւրոպական դիրք՝ Ասիայի դէմ»[11]: Քաղաքական և բարոյական այդ անհրաժեշտությունը գիտակցում էր նաև Պետրոս I-ը, իսկ նրանից հետո՝ Եկատերինա II կայսրուհին, որի «Հայաստանի թագավորությունը վերականգնելու» ուխտը վիժեց վերահաս մահվան հետևանքով, իսկ Նիկոլայ I-ը բավարարվեց միայն Հայաստանի մի փոքր մասը Ռուսաստանին միավորելով: Քաղաքական այս այրերը դեռևս գիտակցում էին. «Այս ժողովուրդը իրապէս ներկայացնում է Եւրոպայի առաջապահը դէպի Արեւելք եւ ձեւացնում է մնացած միակ միջնաբերդը, որով արեւմտեան իդէալները կարող են ներմուծուել Ասիա»[12]:

Այս հարցում, սակայն, ռազմավարության բացակայությունը և զուտ մարտավարական նշանակություն ունեցող գործնական (պրագմատիկ) նկատառումները, ինչպես նկատում է Լ. Տեր-Պետրոսյանը, հիմք էին ստեղծում, որ հակամարտող կողմերի երկարատև շահերը կարճատեսորեն ստորադասվեն պահի թելադրանքով ակնկալված ձեռքբերումներին: Փոքր պետությունների քաղաքական վարքագծի տարերայնությունը խորանում էր՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նրանք

[9] Սելջուկ-թյուրքերի արշավանքները Հայաստան, https://hy.wikipedia.org/wiki/Սելջուկ-թյուրքերի_արշավանքները_Հայաստան
[10] Հ. Ասատրեան, Հատընտիր, Եր., 2004, էջ 189:
[11] Հ. Ասատրյան, նույն տեղում, էջ 190:
[12] Նույն տեղում, էջ 192:

հաճախ նաև դառնում էին աշխարհակալ տերությունների կույր գործիքը՝ օգտագործվելով իրենց վիճակակիցների դեմ ուղղված ծրագրերում: «Բաժանիր, որ տիրես» սկզբունքը, որի էությունը փոքր պետություններին միմյանց դեմ լարելու և այդպիսով՝ նրանց հնարավոր համագործակցությունը վիժեցնելու ձգտումն էր, հատուկ էր բոլոր գերտերություններին: Այս առումով, ամենաբնորոշը, թերևս, Մանուել I Կոմնենոս (1143-1180 թթ.) կայսեր վարած քաղաքականությունն էր Կիլիկիայի հանդեպ: Ձգտելով կանխել Ռուբինյանների հզորացումը՝ Բյուզանդական կայսրը 1150-ական թվականներին նրանց դեմ դրդեց նախ՝ Ռումի սելջուկյան սուլթանությանը, ապա Անտիոքի իշխանապետությանը:

Անդրադառնալով Բյուզանդիայի վարած քաղաքականությանը՝ Լ. Տեր-Պետրոսյանը նկատում է. «….կասկածից վեր է, որ կայսրությունը շատ ավելի մեծ հաջողությունների կհասներ, եթե հայերին ու ֆրանկներին հակադրվելու փոխարեն, նրանց հետ միասնական ճակատ կազմած, փորձեր պայքարել փոքրասիական սելջուկների դեմ: Բացառված չէ, որ նման քաղաքականության կիրառման պարագայում Մերձավոր Արևելքի պատմությունը բոլորովին այլ ընթացք կարող էր ստանալ: Ռազմավարական տեսակետից՝ հայերի և ֆրանկների դեմ Բյուզանդիայի մղած պայքարը, ըստ այդմ, շատ ավելի աններելի կարճատեսություն էր, քան նույնիսկ XI դ. առաջին կեսում Մեծ Հայքի թագավորությունների բռնակցումը կայսրությանը, քանի որ այդ ժամանակ դեռևս ոչ ոք ի վիճակի չէր պատկերացնել սելջուկ-թուրքերի առաջխաղացման վտանգի իրական չափը: Մինչդեռ հետագայում Բյուզանդիայի կողմից այդ վտանգի համառ անտեսումն ու քրիստոնեական ուժերի ջլատումն արդեն ոչ այլ ինչ էր, եթե ոչ նրա արևելյան քաղաքականության լիակատար սնանկության նշանավորումը»[13]:

Քանի որ նախկինում Կիլիկիան Բյուզանդական կայսրության սահմաններում էր, Ռուբինյան իշխողները դիտվում էին իբրև կայսեր ստորաններ, և կայսրությունը չէր համաձայնում ընդունել այդ երկրամասի անկախությունը: Կայսրության անհնազանդ նահանգների՝ Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի խաչակրաց պետությունների հնազանդեցման նպատակով 1137 թ. Հովհաննես Բ Կոմնենոս կայսրը (1118-1143 թթ.), մի ահռելի բանակի գլուխ անցած, շարժվեց դեպի Արևելք: Բյուզանդական արքունիքը դադարել էր այլևս վստահել հայ և լատին իշխանների հավատարմության կեղծ երդումներին, որոնք առիթը բաց չէին թողնում գլուխ բարձրացնել Բյուզանդիայի դեմ՝ հույների հաշվին լուծելով իրենց սեփական խնդիրները: Լևոն Ա-ն, որը համարվում էր Բյուզանդական կայսրության ստորական, չէր ընդունում բյուզանդական գերագահությունը և, բյուզանդացի մատենագիր Միքայել Իտալիկոսի վկայությամբ, ցանկանում էր թոթափել բյուզանդական լուծը և իրեն թագավոր էր կարգել[14]: Հովհաննես Բ Կոմնենոսն ուզում էր հնազանդեցնել ըմբոստ Լևոն Ա-ին: Այդ պատերազմում, չնայած իր հերոսական դիմադրությանը, Լևոն Ա-ն պարտություն կրեց և իր կնոջ ու երկու որդու՝ Թորոսի և Ռուբենի հետ, շղթայակապ տեղափոխվեց Կոստանդնուպոլիս և բանտ նետվեց: Լևոնը և Թորոսը մեռան գերության մեջ[15]: …Հովհաննես Կոմնենոս կայսրը, ակներևաբար, խնդիր էր դրել ոչ միայն վերականգնել Բյուզանդիայի ինքնիշխանությունը Կիլիկիայում, այլև ջնջել երկրամասի հայկական նկարագիրը: Ժամանակակիցներից Ներսես Շնորհալու վկայությամբ, այդ նպատակով նա ավերում և կողոպտում էր Կիլիկիայի վանքերն ու եկեղեցիները, ոչնչացնում հայագիր մատյաններն ու տերունական սրբապատկերները:

Բյուզանդական գերությունից փախած Թորոս Բ-ն 1148 թ. կարողացավ այդ ավերակների վրա վերականգնել հայոց պետականությունը: Սակայն, խաչակիրների, եվրոպական պետությունների, հռոմեական և բյուզանդական եկեղեցիների խարդավանքների, քաղաքական անհեռատե-

[13] Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը: Հ. Ա., Ուսումնասիրություն և թարգմանություններ, Եր., 2005, 552 էջ, https://arar.sci.am/dlibra/publication/192864/edition/175224/content

[14] Հայ ժողովրդի պատմություն, հատոր 2, Եր., «Զանգակ», 2014, էջ 334:

[15] Նույն տեղում, էջ 112:

սության, ազդեցության գոտիների ընդարձակման անտրամաբանական մրցակցության հետևանքով Կիլիկիան նորից կորցրեց իր անկախությունը: Բյուզանդական կայսրերը և խաչակիրները, Կիլիկիայի հայկական պետությունը հզորացնելու փոխարեն, ստեղծել էին նրան սահմանակից մեկ տասնյակի հասնող մանր պետություններ, որոնք հակամարտության մեջ էին Կիլիկիայի թագավորության հետ: Նույնիսկ այդ պայմաններում Կիլիկիայի իշխանություններն ակնկալում էին եվրոպական պետությունների աջակցությունը: Նման քաղաքականությունը չափազանց տրամաբանական է թվում մահմեդականության ծովում հայտնված «քրիստոնեության կղզյակի» համար, սակայն ողբերգականությունը նրանում էր, որ քրիստոնյա Եվրոպան չէր գիտակցում դրա անհրաժեշտությունը, իսկ եթե անգամ ցանկանում էր օգնություն ցուցաբերել, ապա միայն այն պայմանով, որ Կլիլիկիան հրաժարվի իր հայկականությունից[16]:

Այդ մասին է վկայում նաև Լևոն Դ-ի փորձը, որը 1306 թ. գարնանը օգնության խնդրանքով դիմեց Հռոմի պապին: Կլիմենտ Ե-ն խոստացավ օգնություն՝ միայն հայ հոգևորականության կողմից կաթոլիկ եկեղեցու ծիսակատարություններն ու դավանաբանությունը ընդունելու պայմանով[17]: Եվ, չնայած արքունիքը և հայ եկեղեցին ընդունեցին այդ պայմանը, ավելին, Հեթում Բ-ի թագավորության տարիներին արքունիքը կաթոլիկություն ընդունեց, սակայն խոստացված աջակցությունը նրանք չստացան: Օգնության կոչը մնաց անարձագանք նաև 1317 թ., թեև Օշինը նույնպես ջատագովն էր հայ և կաթողիկե եկեղեցիների միության, մի նախապայման, որը դրված էր պապի կողմից՝ եվրոպական ռազմական աջակցության դիմաց[18]:

Կիլիկիայի պետության համար ճակատագրական եղավ հատկապես Լևոն Ե-ի (1320-1342 թթ.) գահակալումը, որը հաջորդեց հանկարծամահ եղած Օշինին[19]: Նա նույնպես հայտնի էր իր արևմտամետությամբ: Լևոն Ե-ի հրամանով 1329 թ. մահապատժի ենթարկվեցին նրա արևմտամետ քաղաքականությանն ընդդիմացող Ալիս (Զաբել) թագուհին, իր խնամակալ Օշին պայլը, վերջինիս եղբայր մարաջախտ Կոնստանդինը և ուրիշներ, իսկ նրանց կալվածքներն ու պաշտոնները արքան նվիրեց Կիպրոսի լատինացի իշխաններին: Պատահական չէ, որ նրա թագավորության տարիներին ծայրահեղորեն սրվեցին Կիլիկիայի և Եգիպտոսի հարաբերությունները: Եգիպտացիները մեղադրում էին հայերին եվրոպացիներին նոր Խաչակրաց արշավանքի դրդելու մեջ: 1335-1337 թթ. մի շարք արշավանքներ կազմակերպվեցին դեպի Կիլիկիա, որի հետևանքով կնքվեց 1337 թ. ծանր պայմանագիրը, որով երկրի հարավարևելյան հատվածը՝ Այաս նավահանգստի հետ միասին, անցավ եգիպտացիներին: Պայմանագիրը, որը կնքվեց 15 տարի ժամանակով, պարունակում էր նաև հատուկ կետ, համաձայն որի՝ հայերը պարտավորվում էին խզել իրենց բոլոր կապերը Հռոմի պապի և Արևմտյան Եվրոպայի միապետների, մասնավորապես՝ Ֆրանսիայի արքա Ֆիլիպ Զ-ի հետ, որն այդ տարիներին դեպի Արևելք կազմակերպվող նոր Խաչակրաց արշավանքի գաղափարախոսներից էր: Որոշ հեղինակներ նշում են, որ Եգիպտոսի սուլթան Մելիք Էն-Նասր Նասրեդին Մոհամեդը Կիլիկիայի թագավորին առաջարկել է երդվել Ավետարանի վրա, որ չի խախտի պայմանագիրը, որի դիմաց խոստացել է հետ քաշել իր բանակը երկրի սահմաններից[20]: Տմր եղան Կիլիկիայի արքաներն իրենց երդմանը. իհարկե, ոչ, որի հետևանքով էլ Կիլիկիան կործանվեց: Պատմագետ Կ. Բասմաճյանը «Խաչակիրները և հայերը» վերնագրով հոդվածում գրում է. «Արդ, ժամանակն է հարցնելու, թէ ինչ շահեցանք մենք՝ հայերս՝ Խաչակիրներու այս արշաւանքներէն:

[16] Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, Հ. Ա., Ուսումնասիրություն և թարգմանություններ, Եր., 2005, 552 էջ:
[17] Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, Բեյրութ, 1959, սյ. 2081-2082:
[18] Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, սյ. 2133-2134:
[19] Կ. Բասմաճյան, Լևոն Ե Լուսինյան. Վերջին թագավոր հայոց, Փարիզ, 1908, https://digilib.aua.am/book/1348/1615/Լեւոն%20Ե%20Լուսինեան.%20Վերջին%20թագաւոր%20Հայոց?pageNum=2
[20] Առավել մանրամասն տես Ա. Հովհաննիսյան, Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 1250-1375 թթ., Եր., 2008, էջ 160-170:

Աւելի լաւ է հարցնել, ըստ իս, թէ ինչ կորսնցուցինք մենք Խաչակիրներուն օգնելով:

Պատասխանը պարզ է:

Մէկ կողմէն, մեր ահաւոր դրացիներու թշնամութիւնը շահեցանք, իսկ միւս կողմէն՝ մեր Կիլիկեան հարստութիւնը վրայ տուինք, Խաչակիրներու երեսէն»[21]:

Թերևս, մենք այն բացառիկ ժողովուրդներից ենք, որը դաս չի քաղում պատմությունից: Դա նկատել էր նաև Գարեգին Նժդեհը. «Հայոց պատմությունը մեզ մի հատիկ բան է սովորեցնում, այն, որ հայն իր պատմությունից բնավ չի սովորում»: Չի սովորում, որովհետև պատմությունը դիտարկում է սոսկ որպես անցած-գնացած, անվերադարձ իրադարձությունների և ոչ թե պատճառահետևանքային կապերով պայմանավորված գործընթացների հոսք: Հետևաբար՝ ներկայի յուրաքանչյուր իրադարձություն ձևավորվում և հասունանում է անցյալի մեջ, իսկ գալիքը չի կարող լինել այլ բան, քան այն, ինչը շաղախվում և ձև ու բովանդակություն է ստանում ներկայի մեջ…

Մեր ժողովրդի և մտավորականության «կույր» արևմտամետության հետևանքով ստացած հաջորդ հարվածը 1878 թ.-ին էր՝ Բեռլինի վեհաժողովում, որը հրավիրվել էր Մեծ Բրիտանիայի և Ավստրո-Հունգարիայի պահանջով՝ Սան Ստեֆանոյի պայմանագիրը վերանայելու և Ռուս–թուրքական պատերազմում Ռուսաստանի արձանագրած հաջողությունները սահմանափակելու նպատակով: Ռուս–թուրքական պատերազմները միտված էին Սև ծովի ավազանի և Կովկասի տարածաշրջանի նկատմամբ վերահսկողության ամրապնդմանը (սկսվելով դեռևս 1568–1570-ական թվականներին, դրանք շարունակվում են մինչև հիմա, և եթե անգամ որոշակի դրվագներում ռուսներն ու թուրքերը հանդես են գալիս դաշնակցի և բարեկամի դիմակներով, միևնույն է, այդ հակամարտությունը շարունակվելու է նաև հետագայում):

Շարունակելի…

[21] Կոչնակ, 1929, մայիսի 11, էջ 589-590:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատրեան Հ., Հատընտիր, Եր., 2004:
2. Լաստիվերցի Ա., Պատմություն, թարգմ.՝ Վ. Ա. Գևորգյանի, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գ. Մանուկյանի, Եր., 1971:
3. Բասմաճյան Կ., Լևոն Ե Լուսինյան. վերջին թագավոր հայոց, Փարիզ, 1908, https://digilib.aua.am/book/1348/1615/Լեւոն%20Ե%20Լուսինեան.%20Վերջին%20թագաւոր%20Հայոց?pageNum=2
4. Գաբրիելեան Մ.Ս., Հայկական ճգնաժամն եւ վերածնութիւն, 2- րդ հրատ., Պոստոն, տպ. Ատլանդեան, 1909:
5. Լեո, Երկերի ժողովածու, առաջին հատոր, Եր., 1966:
6. Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19-րդ դ. 70-ական թթ.), Եր., 1978:
7. Հայ ժողովրդի պատմություն, հատոր 2, Եր., «Զանգակ», 2014:
8. Չոպանեան Ա. , Պատասխանատուները // «Անահիտ», Ա տարի, N 3, 1899:
9. Սարուխան, Հայկական խնդիրն եւ ազգային սահմանադրութիւնը Թիւրքիայում (1860-1910), Թիֆլիս, 1912:
10. Վարանդյան Մ., Հայկական շարժումների նախապատմությունը, հ. 2, Ժնև, 1913:
11. Թեոֆիլ Վ. Ա., Բաց նամակ Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին հայ ժողովրդին Միջագետքի անապատ արտաքսելու մասին. Բեռլին, հունվար, 1919 թ., «Դրօշակ», թիվ 8, 2021 թ., https://akunq.net/am/?p=79231
12. Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը: Հ. Ա. Ուսումնասիրություն և թարգմանություններ, Եր., 2005:
13. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Բ, Բեյրութ, 1959:
14. Моруа А. Жизнь Дизраэли. М., 1991.
15. Ролен – Жекмен, Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году, М. 1896, 2-ое изд.

Юрий ОВАКАНЯН
Кандидат философских наук, доцент, АГЭУ

ВИДЕНИЕ АРМЯНСКОГО ОБЩЕСТВА

ЗАПАД В КОНТЕКСТЕ НАШЕЙ НАЦИОНАЛЬНОЙ ТРАГЕДИИ

Армянский народ – это детище Армянского нагорья и Востока. Он почитает традиции, любит природу и эмоционален. Его культура – это культура сердца, вхождение в чужой Мир, жизнь чужой заботой и болью… Человек Востока не претендует на признание себя Миром или Другими. Именно поэтому гениальный Туманян, родной стихией которого был Восток, отмечал, что мы не знаем ни себя, не своих соседей… Запад воспринимает мир исключительно разумом. Здесь главное не человек, а техника. Здесь все рассчитано, исходя из прибыли. Здесь не живут чужими проблемами. Западная цивилизация опирается на иной Духовный Путь, на разум, исповедует иные морально-этические и культурные ценности, вытекающие из разумного эгоизма… Каждый из них ценен по-своему. Однако концепция «варварского Востока и цивилизованного Запада», созданная Геродотом и Аристотелем, получила дальнейшее развитие у К. Монтескье «О духе законов» и в творчестве А. де Токвилья, стала преобладающей в общественном сознании.

После нашествий Александра и, особенно, национализации христианства, наш взор был направлен на Запад, в сторону Европы… Мы, воевавшие вместе с Востоком против Запада, стали носителями и распространителями западных ценностей на Востоке. И на Востоке на нас стали смотреть как на чужаков… Запад никогда не считал нас союзником и не стоял за нас… хотя мы взяли на себя тяжелую и ответственную роль распространителя западных культурных и гражданских ценностей на Востоке… Автор во многих примерах пытается обосновать, что в основе потери нашей государственности, всех наших больших и малых трагедий лежала наша неправильная и неоправданная ориентация на Запад…, не задумываясь даже, что у Запада свои геополитические интересы, среди которых никогда не было существования суверенной Армении, не говоря уже о мощном государстве. К сожалению, с таким же упорством мы повторяем ту же ошибку и сегодня, ожидая поддержки Запада, вместо наших естественных союзников…

Ключевые слова: *конфликт Восток – Запад, христианство, ислам, потеря армянской государственности, борьба за независимость, заговор, крестоносцы, теория равновесия, Берлинский конгресс, геноцид, Севрский договор, Лозаннский договор, битва за выживание Арцаха*

Yuri HOVAKANYAN
PhD in Philosophy, Associate Professor, ASUE

THE VISION OF THE ARMENIAN SOCIETY

THE WEST IN THE CONTEXT OF OUR NATIONAL TRAGEDY

The Armenian people are deeply rooted in the Armenian Highlands and the East. They are characterized by their traditionalism, love for nature, and emotional disposition. Their culture is one of the heart, marked by empathy for others, sharing their joys, and feeling their sorrows.

The man of the East does not claim to be recognized by the world or by others. That is why the genius Tumanyan, whose native element was the East, noted that we know neither ourselves, nor our neighbors… The West perceives the world exclusively with the reason.

The main thing here is not the person, but the technique. Everything here is calculated based on profit. Here people do not live with other's problems. Western civilization follows a different spiritual path that relies on reason, professes different moral, ethical and cultural values that derives from rational egoism. Each of these is valuable in its own way.

However, the concept of "barbarian East and civilized West", created by Herodotus and Aristotle, was further elaborated by Sh. Montesquieu's "On the Spirit of Laws" and the works of A. de Tocqueville, eventually shaping public perception.

Following the invasions of Alexander and, especially, the adoption of Christianity as a national identity, our focus shifted westward, towards Europe. We, who once fought together with the East against the West, became carriers and promoters of Western values in the East. The East began to percieve us as outsiders. The West never considered us allies and did not advocate for us despite our role in spreading the Western culture and values in the East. Through numerous examples, the author attempts to justify that our loss of statehood, all our big and small tragedies stemmed from our wrong and unjustified orientation towards the West. We often overlooked the fact that the West has its own geopolitical interests, with no inclination to support the existence of a sovereign Armenia, let alone a powerful state. Unfortunately, with the same persistence, we repeat the same mistake today seeking support from the West instead of our natural allies.

Keywords: *East-West conflict, Christianity, Islam, loss of Armenian statehood, struggle for independence, conspiracy, crusaders, balance theory, Berlin Congress, genocide, Treaty of Sèvres, Treaty of Lausanne, battle for the survival of Artsakh*